ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
առ 23 ապրիլի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ

ԵՎ

ՎՐԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետև՝ ՀՀ փաստաբանների պալատ) ի դեմս ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյանի, մի կողմից և Վրաստանի փաստաբանների ասոցիացիան, ի դեմս նախագահ Զազա Խատիաշվիլիի, մյուս կողմից (այսուհետև միասին՝ Կողմեր), կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետև՝ Հուշագիր):

Նախաբան

Կողմերը, հաշվի առնելով, որ փաստաբանական ինստիտուտի կայացումը հանդիսանում է իրավական պետության երաշխիք, և **նպատակ ունենալով** համագործակցել փաստաբանության և փաստաբանական գործունեության ոլորտում, **պատրաստակամություն են արտահայտում** աջակցելու Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության փաստաբանների ու փաստաբանական կառույցների (միավորումների) համագործակցությանը և փաստաբանական ինստիտուտների զարգացմանը:

Հաշվի առնելով Կողմերի փոխադարձ վստահությունը միմյանց հանդեպ և համագործակցության պատրաստակամությունը՝ Կողմերը համաձայնվում են ներքոհիշյալի վերաբերյալ.

МЕМОРАНДУМ О ВЗАИМОСОГЛАСИИ
от 23 апреля 2014г.

МЕЖДУ ПАЛАТОЙ АДВОКАТОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

И

АССОЦИАЦИЕЙ АДВОКАТОВ ГРУЗИИ

Палата адвокатов Республики Армения (далее - палата адвокатов РА) в лице председателя палаты адвокатов РА Ара Зограбяна с одной стороны, и Ассоциация адвокатов Грузии, в лице председателя Зазы Хатиашвили, с другой стороны (далее- совместно Стороны) подписали данный меморандум о взаимопонимании (далее - Меморандум).

Предисловие

Стороны учитывая, что формирование адвокатского института является гарантией правового государства, и **с целью** сотрудничества в области адвокатуры и адвокатской деятельности **выражают готовность** поддерживать адвокатов и адвокатские структуры (объединения) Республики Армения и Республики Грузия, сотрудничеству и развитию адвокатских институтов.

Учитывая взаимное доверие и готовность сотрудничества друг с другом Стороны договорились о нижеследующем:

Հոդված 1.

1. Հուշագրի նպատակներն են՝
1) Նպաստել արդարադատության մատչելիությանը,
2) Բարձրացնել փաստաբանի մասնագիտական որակավորումը՝ լավագույն միջազգային փորձին համապատասխան,
3) Զարգացնել փաստաբանական ինստիտուտը,
4) ամրացնել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության փաստաբանների համագործակցությունը,
5) աջակցել փաստաբաններին հանդես գալու երկու պետությունների դատարաններում՝ որպես փաստաբաններ,
6) կատարելագործել փաստաբանական գործունեությանը վերաբերող օրենսդրությունը:

Հոդված 2.

1. Հուշագրի շրջանակներում համագործակցություն իրականացնելիս Կողմերն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝
1) կողմերի հավասարության,
2) մարդու իրավունքների գերակայության,
3) օրենքի նկատմամբ հարգանքի,
4) բարեխղճության
5) թափանցիկության և
6) ազնվության:

Հոդված 3.

1. Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:
2. Հուշագիրը չի խոչընդոտում

Статья 1:

1. Целями Меморандума являются:
1) обеспечить доступность к правосудию;
2) приумножить профессиональную квалификацию специальности адвоката, в соответствии с наилучшей международной практикой;
3) развивать адвокатский институт;
4) укрепить сотрудничество адвокатов между Республикой Армения и Республикой Грузия;
5) оказать содействие адвокатам выступать в судах двух государств, в качестве адвокатов;
6) усовершенствовать законадательство, касающееся адвокатской деятельности;

Статья 2:

1. В рамках Меморандума Стороны, осуществляя сотрудничество, руководствуются следующими принципами:
1) равенство Сторон;
2) верховенство прав человека;
3) уважение к закону;
4) добросовестность;
5) прозрачность и
6) честность.

Статья 3:

1. При осуществлении основных направлений сотрудничества Стороны должны предпринять все средства для создания благоприятных условий установленных в Меморандуме.
2. Меморандум не препятствует

համագործակցության այլ ուղղությունների սահմանմանը՝ հաշվի առնելով պետությունների օրենսդրությունները և միջազգային պարտավորությունները:

Հոդված 4.

1. Կողմերը պատրաստակամություն են հայտնում աջակցելու միմյանց այլ պետություններում գործող փաստաբանական միավորումների, միջազգային և արտասահմանյան, պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղությունների իրագործմանը:

2. Համատեղ ծրագրերի իրականացման կոնկրետ պայմանները և ձևերը սահմանվում են Կողմերի կողմից՝ առանձին փաստաթղթի տեսքով:

Հոդված 5

1. Կողմերը համագործակցություն են իրականացնում հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) կրթական ծրագրերի իրականացում՝ միջազգային կոնֆերանսների, կոնգրեսների, սեմինարների կազմակերպում,

2) փորձի փոխանակում՝ տարբեր պետությունների փաստաբանների պատվիրակությունների կազմակերպում,

3) միջոցառումների կազմակերպում՝ ցուցահանդեսների, սպորտային և մշակութային միջոցառումների անցկացում,

4) օրենսդրության բարելավում՝ փաստաբանական գործունեության կատարելագործմանն ուղղված օրենքների, այլ իրավական ակտերի, նախագծերի մշակում, փորձագիտական կարծիքի տրամադրում:

определению сотрудничества в других областях, с учетом законодательства государств и международных обязательств.

Статья 4:

1. Стороны выражают готовность содействовать друг другу в адвокатских объединениях в других странах, международных и иностранных правительственных и неправительственных организациях, в реализации совместных проектов, направленных на реализацию сотрудничества в основных областях, установленных в Меморандуме.

2. Для реализации конкретных совместных программ порядок и условия определяются Сторонами в отдельных составленных документах.

Статья 5

1. Стороны осуществляют сотрудничество в следующих направлениях:

1) осуществление образовательных программ: организация международных конференций, конгрессов, семинаров;

2) обмен опыта: организация делегаций юристов из разных стран;

3) организация мероприятий: организация выставок, спортивных и культурных мероприятий;

4) улучшение законодательства: законов направленных на усовершенствование адвокатской деятельности, направленных на разработку проектов законов и других юридических актов, а также предоставление экспертного

заключения.

Հոդված 6

1. Հուշագրով սահմանված համագործակցության հիմնական ուղղություններն իրագործելու համար Կողմերը պատրաստակամություն են հայտնում՝

1) տարվա մեջ անվճար մեկ անգամ սեմինարներ անցկացնել, այդ թվում՝ հեռավար (դիստանցիոն) ձևով,
2) կազմակերպել տարբեր պետությունների փաստաբանների այցեր՝ Հայաստանի Հանրապետություն և Վրաստանի Հանրապետություն, որի ընթացքում կուսումնասիրվի և կտարածվի լավագույն փորձը,
3) սպորտային, մշակութային միջոցառումներ կազմակերպել և անցկացնել,
4) ստեղծել Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության փաստաբանների միջև արդյունավետ համագործակցության համակարգ՝ (սոցիալական ցանցեր, ինտերնետային էջեր, մասնագիտացված կայքեր):

Статья 6

1. Для реализации основных направлений, определенных в Меморандуме, Стороны выражают готовность:

1) раз в году провести бесплатный семинар, в том числе на расстоянии (дистанционно);
2) организовывать визиты адвокатов из разных государств в Республику Армения и Республику Грузия, где будет изучен и распространен наилучший опыт;
3) организовывать и проводить спортивные, культурные мероприятия;
4) создать между адвокатами Республики Армения и Республики Грузия эффективную систему сотрудничества (социальные сети, веб-страницы, специализированные сайты).

Հոդված 7

Հուշագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Статья 7

Споры, связанные с комментариями и (или) применением Меморандума решаются с помощью совещаний и переговоров между Сторонами.

Հոդված 8

Հուշագրում կարող են ընդգրկվել առանձին փաստաթղթի տեսքով ձևակերպվող փոփոխություններ և (կամ) լրացումներ:

Статья 8

В Меморандуме могут быть включены изменения и (или) дополнения в виде отдельных документов.

Հոդված 9

Հուշագիրը կնքվում է երեք տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում այն ստորագրման պահից: Ժամկետը լրանալուց հետո այն երկարաձգվում

Статья 9

Меморандум заключается сроком на три года и вступает в силу с момента его подписания. Если между Сторонами нету соглашений об

է նույն ժամկետով և պայմաններով, ինչ Հուշագիրը, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

Հոդված 10

1. Հուշագիրը ստորագրվել է քաղաք Երևանում, 2014 թվականի ապրիլի 23-ին, հայերեն և ռուսերեն լեզուներով երկու հավասարազոր իրավական ուժ ունեցող օրինակներից: Հուշագիրը մեկնաբանելիս տարակարծությունների առաջացման կամ ծագման դեպքում որպես հիմք ընդունել հայերեն լեզվով կազմած օրինակը:
2. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատ
պալատի նախագահ՝ Ա. Զոհրաբյան

Վրաստանի փաստաբանների
ասոցիացիայի նախագահ ՝ Զ. Խատիաշվիլի

ином, то по истечению срока действия Меморандума, он на тех же условиях продлевается на тот же срок.

Статья 10

1. Меморандум был подписан в г. Ереван 23 апреля 2014 года, на армянском и русском языке на двух имеющих одинаковую юридическую силу экземплярах. В случае возникновения расхождений между армянским и русским текстами Меморандума привилегия дается армянскому тексту.
2. Каждой стороне выдается по одному экземпляру.

ДАННЫЕ И ПОДПИСИ СТОРОН

Палата адвокатов Республики Армения
Председатель палаты Ара Зограбян

Ассоциация адвокатов Грузии
Председатель З. Хатиашвили